

ՏՈՆԱՑՈՒՅՑ

1. Փետրվարի 2 Տյառնընդառաջ: Սուրբ Պատարագ՝ ժամը 13:00
2. Փետրվարի 12 Վարդանանց տոն:
3. Փետրվարի 15՝ Բուն Բարեկենդան, Սուրբ Պատարագ, որի ավարտին տեղի կունենա Մոխրոց ժամը 15:30:
4. Փետրվարի 16-ից Ապրիլի 4՝ Մեծ Պահքի ժամանակաշրջան:
5. Մարտի 25՝ Սուրբ Կույս Մարիամի Ավետման տոն:
6. Մարտի 29՝ Ծաղկազարդ, Ուռօրհներք և Դոնբացեք:
7. Ապրիլի 5՝ Սուրբ ԶԱՏԻԿ, Պատարագ՝ ժամը 15:30:
8. Ապրիլի 6՝ Օր մեռելոց: Պատարագ ժամը 13:00

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 26-ին Մոսկվայի Անարատ Հղության մայր տաճարի տարածքում տեղի կունենա միջոցառում, որի ընթացքում Ռուսաստանի հայ կաթողիկե եկեղեցու կողմից Հուշակոթող-Խաչքար կտեղադրվի 1915թ. Օսմանյան Կայսրության կողմից իրականացված Հայոց Ցեղասպանության գոհերի հիշատակին: Խաչքարի բացման արարողությանը հրավիրված են բարձրաստիճան անձինք Կաթողիկե պատրիարքարանից, Հայ Առաքելական եկեղեցուց, Ռուս Ուղղափառ եկեղեցուց, Վատիկանից, Ռուսաստանում Հայաստանի դեսպանատնից և այլ հայտնի հայասերներ:

Հրավիրում ենք ներկա գտնվել և հարգանքի տուրք մատուցել:

Ժողովրդապետություն

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի

Մեր հասցեն՝ ր. Москва, ул. Малая Грузинская д. 19/2

Հեռախոսներ

+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)

+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)

E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it

<http://armcatholik.ru>



ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ

ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԲԱՌ «ԱՐՄԱՎԵՆԻ»

1 Սուրճիկ

2 Բուրձնիկ

3 Բլիթ

4 Կարկանդակ

5 Կարկանդակ

6 Բլիթ

7 Կարկանդակ

8 Կարկանդակ

ԿԻՐԱԿԵՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

2Տիմոթեոս 3,1-15

3 Այս բանն իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, ²երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտաւան, հայիտոյոյ, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, ³անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, անբարեսեր, ⁴մատնիչ, յանդուգն, մեծամիտ, աւելի շատ հեշտասեր, քան աստուածասեր, ⁵մարդիկ, որ ունեն աստուածապաշտութեան կերպարանք, սակայն ուրացել են նրա զօրութիւնը: Նաեւ խորշի՛ր նրանցից, ⁶քանզի նրանց մէջ կան այնպիսիք, որ մտնում են տնից տուն եւ գերում են մեղքերով ծանրաբեռն կանանց, որոնք տարուած են պէսպէս ցանկութիւններով. ⁷կանայք, որ միշտ ուսանում են, բայց երբեք չեն կարող հասնել ճշմարիտ գիտութեանը: ⁸Եւ ինչպէս Յաննէսն ու Յամբերը հակառակուեցին Մովսէսին, այնպէս էլ սրանք հակառակուում են ճշմարտութեանը. ապականուած մտքով մարդիկ, անպէտք՝ հաւատի մէջ: ⁹Բայց նրանք աւելի առաջ գնալ երբեք չեն կարող, քանի որ իրենց յիմարութիւնը յայտնի կը լինի բոլորին, ինչպէս որ եղաւ այդ երկուսինը: ¹⁰Իսկ դու հետեւեցիր իմ վարդապետութեանը, իմ վարմունքին, կամեցողութեանը, հաւատին, համբերատարութեանը, սիրուն, համբերութեանը ¹¹եւ այն հալածանքներին ու չարչարանքներին, որոնք պատահեցին ինձ Անտիոքում, Իկոնիոնում եւ Լիստրայում. գիտես, թէ ինչպիսի՛ հալածանքների ենթարկուեցի, բայց Տէրն ինձ փրկեց այդ բոլորից: ¹²Եւ բոլոր նրանք, որ ուզում են աստուածապաշտութեամբ ապրել Քրիստոս Յիսուսով, հալածանքների մէջ պիտի լինեն: ¹³Իսկ չար եւ խաբեբայ մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան. իրենք մոլորուած՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին: ¹⁴Բայց դու հաստատ մնա այն բանի մէջ, որ սովորեցիր եւ որին հաւատարիմ եղար. գիտես, թէ ումից ես սովորել, ¹⁵որովհետեւ մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ

փրկութեան համար այն հաւատի միջոցով, որ Քրիստոս Յիսուսի մէջ է:

Հովհաննէսի Ավետարանը 6, 22-38

²²Յաջորդ օրը, ժողովուրդը, որ մնացել էր ծովի այն կողմը, տեսաւ, որ այնտեղ այլ նաւակ չկայ, բացի միայն մէկից, որի մէջ մտել էին Յիսուսի աշակերտները, իսկ Յիսուս իր աշակերտների հետ նաւակ չէր մտել, այլ միայն իր աշակերտներն էին գնացել: ²³Սակայն Տիբերիայից ուրիշ նաւակներ էլ գալիս էին մօտ այն տեղին, ուր հացն էին կերել: ²⁴Ուրեմն, երբ ժողովուրդը տեսաւ, որ Յիսուս այդտեղ չէ եւ ոչ էլ՝ նրա աշակերտները, նաւակներ նստեցին եւ եկան Կափառնայում՝ Յիսուսին փնտռելու: ²⁵Եւ երբ նրան գտան ծովի միւս կողմում, ասացին նրան. «Ռաբբի՛, ե՞րբ եկար այստեղ»: ²⁶Յիսուս պատասխանեց նրանց եւ ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, դուք ինձ փնտռում էք ոչ թէ նրա համար, որ նշաններ տեսաք, այլ որովհետեւ կերաք այն հացից եւ կշտացաք: ²⁷Գնացէք աշխատեցէ՛ք ոչ թէ կորստեան ենթակայ կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է յաւիտենական կեանքի համար, եւ որը մարդու Որդին կը տայ ձեզ, քանի որ նրան իր կնիքով հաստատել է Հայրը՝ Աստուած»: ²⁸Նրան ասացին. «Ի՞նչ անենք, որ Աստծու ուզած գործերը գործենք»: ²⁹Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Աստծու ուզած գործը ա՛յս է. որ հաւատաք նրան, ում նա ուղարկեց»: ³⁰Նրան ասացին. «Ի՞նչ նշան կանես, որ տեսնենք եւ հաւատանք, ի՞նչ գործ կը գործես: ³¹Մեր հայրերը անապատում մանանան կերան, ինչպէս որ գրուած է. «Երկնքից նրանց հաց տուեց ուտելու»: ³²Յիսուս նրանց ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Մովսէսը չէ, որ ձեզ երկնքից հաց տուեց, այլ իմ Հայրն է, որ տալիս է ձեզ ճշմարիտ հացը երկնքից. ³³որովհետեւ Աստծուց է այն հացը, որ իջնում է երկնքից եւ կեանք է տալիս աշխարհին»: ³⁴Նրան ասացին. «Տէ՛ր, ամէն ժամ տո՛ւր մեզ այդ հացը»: ³⁵Յիսուս նրանց ասաց. «Ես եմ կենաց հացը. ով դէպի ինձ գայ, քաղց չի զգայ, եւ ով ինձ հաւատայ, երբեք չի ծարաւի: ³⁶Բայց ես ձեզ ասել եմ, թէ ինձ տեսաք եւ չէք հաւատում: ³⁷Բոլոր նրանք, ում Հայրն ինձ տալիս է, կը գան ինձ մօտ, եւ ով որ ինձ մօտ կը գայ, դուրս չեմ անի. ³⁸որովհետեւ ես երկնքից իջայ ոչ թէ իմ կամքը կատարելու համար, այլ՝ կամքը նրա, ով ինձ ուղարկեց:

Հայոց Մեծ Ցեղասպանության հարյուրամյակին ընդատաջ...

համար, որոնք Թուրքիայում ևս մեծ քանակությամբ կային, մինչդեռ նրանց համար հատկացվող գումարներն այլևս հնարավոր չէր լինում վերահսկել, «Օգնության ...» ընկերությունը [Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե-Գ.Խ.] որոշեց իր հայ որբերին մի ոչ թուրքական երկիր տեղափոխել: Այդ ժամանակ հարավարևելյան Անատոլիայի համար, որպէս հանգրվան ընտրվեց Լիբանանը»:

Երեխաների տեղափոխությունը մեծ ցնծություն առաջացրեց որբերի շրջանում, «քանի որ ի՛նչ հաճոյքով պիտի հեռանային նրանք մի երկրից, ուր մահուան և կործանումի վտանգը կար շարունակ»(25): Յուրաքանչյուր քարավանի մեկնումը վերածվում էր մի զվարճալի հանդիսության: Երեխաներն իրենց քարավանի ավանակներին զարդարում էին դրոշակներով և զանգակներով, իսկ նրանց ճանապարհող մահմեդական կանայք՝ իրենց սովորության համաձայն, մեկնող երեխաների հետևից բացականչում էին «լի-լի-լի-լի»-: Իր հուշերում Քյուցլերը վկայում է, որ «լի-լի-լի-լի»-ն ոչ միայն ուրախության բարձրակոչ էր, այլև՝ ռազմակոչ, քանի որ «նրանք [մահմեդական կանայք-Գ.Խ.] այդ «լի-լի-լի-լի»-ն էին աղաղակել նույն այդ երեխաների ծնողների յետևից, երբ նրանց տանում էին ջարդելու»:

Ըստ Ջ. Բարտոնի տվյալների՝ 1922-23 թթ.՝ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի գործուն աշխատանքների շնորհիվ, մոտավոր հաշվարկով Թուրքիայից Սիրիա, Լիբանան և Հունաստան էվակուացվեցին մոտ 30.000 հայ և հույն որբ, որից 12.000 հայ երեխա՝ կայսրության միայն հարավային, հարավարևելյան շրջաններից(36):

Յա. Քյունցլերի կողմից տարահանված 8.000 հայ երեխաները, որոնք ըստ էության փրկվեցին վերահաս ֆիզիկական բնաջնջումից, իրենց հետևում թողնելով պատմական հայրենիքը՝ հայտնվեցին նոր երկրում և բոլորովին նոր միջավայրում՝ ստանալով նոր կյանք սկսելու հնարավորություն:

Գոհար Խանումյան , Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
<http://www.genocide-museum.am//>

Այսպիսով, ելնելով Թուրքիայում ստեղծված քաղաքական լարված իրավիճակից, ինչպես նաև հատկապես հայ որբերի կյանքին սպառնացող հնարավոր վտանգից, հայ հասարակական գործիչներն ու հոգևոր ներկայացուցիչները և Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն, որի աշխատակիցների որբահավաք աշխատանքների արդյունքում 1918-1921 թթ. հավաքագրվել էր 132.000 (13) հայ, հույն և ասորի որբ(14), օրհասական համարեցին կայսրության տարածքի որբանոցներում ապաստանած քրիստոնյա որբերին տարհանել երեք հիմնական ուղղություններով.

1. Բալկաններ՝ Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան
2. Կովկաս
3. Միջին Արևելք՝ Սիրիա և Լիբանան:

Թուրքիայից որբերի *էվակուացիան* ապահովելու էր երեխաների հետագա ֆիզիկական անվտանգության, կեցության և ազգային դաստիարակության հարցը: Ըստ էության տարհանվում էին այն որբերը, որոնց զինադադարից հետո հավաքագրել էին անմարդաբնակ վայրերից (անապատներից, անտառներից), փողոցներից, որտեղ նրանք զբաղվում էին մուրացկանությամբ, մահմեդական ընտանիքներից և թուրքական պետական որբանոցներից, Կարմիր խաչի, Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի աշխատակիցները և հայ եկեղեցու ու հայկական բարեգործական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող հայ որբահավաքները: Հայ որբերի դուրսբերումը Թուրքիայից իրականացվելու էր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի ֆինանսական օժանդակության շնորհիվ: Իր հուշերում շվեյցարացի միսիոներ Յա. Քյունցլերը(15) գրում է. «Ամերիկացիները 1919 թվին ողջ Թուրքիայում աքսորի ժամանակ թուրքական, քրդական և արաբական տներ տարված՝ ավելի քան տասն հազար որբ երեխաներ էին հավաքել, որոնք աքսորի ժամանակ տարվել էին թուրքերի, քրդերի և արաբների տները: Քանի որ շարունակ ուժեղացող քեմալական կառավարությունը ամերիկացիների համար շատ տեղերում ամենուր դժվարություններ էր հարուցում, նրանց վերահսկում էր, նրանցից օգնություն էր պահանջում նաև մուսուլման որբերին օժանդակելու

«Ես եմ կյանքի հացը: Ով գալիս է դեբի ինձ քաղց չի զգա բնավ և ով հավատում է ինձ, չի ծարավի երբեք (Յովհ. 35-36):

Մեր կյանքը լի է հոգսերով, տառապանքով, հաճախ՝ ապարդյուն ջանքերով, ինչ որ սին նպատակի հասնելու համար ծախսած ահռելի ջանքերով: Ավա՛ղ, նաեւ հիվանդություններով:

Աշխարհի ներկա դրությունը շատերին գցել է անհասկացողության, ճկնաժամի, կասկածների մեջ: Մարդիկ արբում են անորոշութեամբ եւ յուսախաբութիւններով: Մի կողմից ազգերը խոսում են համաշխարհային խաղաղութեան գիտականորէն եւ ուսումով ւաւելի հասունանում ու զարգանում են, սակայն միուս կողմից արժեքազրկվում են հոգով և բարոյականությամբ: Նոր սերունդը հետս հետե գանլով դառնաում է կյութապաշտ եւ եսասեր:

Աշխարհի մեծագույն փորձանքները, կործանումներն ու ցավերը ընդհանրապես մարդու անգիտութեան պատճառով են եղել: Ոչ մի բան աշխարհին այնքան վնաս չի պատճառել, որքան մարդը, որովհետև նա մտածել, ապրել ու գործել է առանց Աստծու երկյուղի:

Մարդուն երկու ունակություն է հատուկ՝ իմացական միտքն ու ազատ կամքը, որոնցով է նա մարդ: Մտքի գործը ճշմարտությունը ճանաչելն է, իսկ կամքինը՝ բարու ու չարի միջև ընտրություն կատարելը *«Մարդ ստեղծենք Մեր կերպարանքով ու նմանությամբ» (Ծննդ. 1, 26):*

Աստված բարի է և ամբողջովին լցված է սիրով:

«Տերն է իմ լույսն ու կյանքը, ո՛ւմից վախենամ. Տերն իմ կյանքի ապավենն է, ո՛ւմից ես դողամ» ... (Մաղմոս 26:1):

Մենք հաճախ մոռանում ենք մահվան եւ հավերժական կյանքի գոյության մասին, ինչպես հարկն է գնահատել չենք կարողանում հավիտենական կյանքը, դրա համար էլ ներկան ու ապագան կշռելիս գերագնահատում ենք առաջինը: Դրա համար էլ ինչպես հարկն է չենք պատրաստվում ապագային, այնինչ մեզ համար ամենաօգտակար բանը կլիներ հավերժական կյանքին պատրաստվելը:

«Նրանց մեջ պիտի գնամ ու նրանց մեջ պիտի բնակվեմ: Ես նրանց Աստված պնտք է լինեմ, և նրանք էլ Իմ ժողովուրդը պնտք է լինեն» (Ղևտ

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀՈԶԱԿԱԳԻՐ**



2015թ. հունվարի 29-30-ը Երևանում տեղի ունեցավ հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 5-րդ նիստը, որին մասնակցեցին Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս Պատրիարք Ամենապատիվ Ներսես Պետրոս ԺԹ,

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա, բարձրաստիճան այլ հոգևորականներ, քաղաքական, հասարակական և մշակութային գործիչներ, փորձագետներ Հայաստանից և հայկական սփյուռքից: Նիստը վարել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Իր բավական ընդարձակ ելույթի խոսքում նախագահ Սարգսյանը ասել է. «Երբ ծանոթացա հանձնախմբերի կողմից ծավալված աշխատանքի հաշվետվություններին, նրանց կազմած միջոցառումների ծրագրերին, արդեն կատարված աշխատանքին, առաջին հերթին նկատեցի այն հսկայական ուժը, որը մենք ունենք: Վստահ եմ, որ հակառակ բոլոր չարագույժների՝ 100-րդ տարելիցը դառնալու է ոչ թե մեր սփյուռքի և համայնքային կառույցների ինքնասպառման, այլ նոր վերելքի, նոր համախմբման, նոր սերնդի բարձր խոսքի շրջան»: Նախագահը նաև կոչ է արել աշխարհի հայությանը հետևել ապրիլի 23-ին Էջմիածնում տեղի ունենալիք Հայոց Եղեռնի գոհերի սրբադասման արարողությանը:

Նախքան նիստի մեկնարկը հանձնաժողովի անդամները ներկա է են գտնվել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի բացմանը: Թանգարան ինստիտուտի համար շենք է հատկացվել Կոմիտասի պանթեոնում և վերակառուցվել «Փյունիկ» հիմնադրամի և ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդամ պարոն Գաբրիել Ջամբարջյանի ֆինանսավորմամբ, ճարտարապետ Արթուր Մեսչյանի նախագծով: Թանգարանում ոչ միայն հանրությանը

կներկայացվեն Կոմիտասի գործունեության հետ կապված ցուցադրություններ, այլև կծավալվի գիտահետազոտական աշխատանք՝ Կոմիտասի ժառանգության շուրջ: Ամենապատիվ Հոգևոր Տեր Ներսես Պետրոս ԺԹ-ն թանգարանի բացման հուշամատյանում գրել է հետևյալը.

«Յուզումնախառն հպարտութեամբ կ'ողջունենք հանճարեղ Կոմիտաս Վարդապետին յիշատակը յաւերժացնող այս գեղակերտ հիմնարկին բացումը: Հայ Ազգը իրյաղթապանծ գոյերթը կը պարտի ոչ միայն Վարդանանց ժառանգորդ ազատամարտիկներուն, որոնք գիտակիցմահուամբ կ'անմահանան ցայսօր, այլ նաեւ այն նախախնամական հանճարներուն՝ որոնք Հայութիւնը օժտեցին այլասերման ու ծուլումին դիմադրելու անգերազանցելի միջոցներով եւ յաւերժագիր պարգեւեցին անոր: Անոնցմէ է Կոմիտաս Վարդապետ: Ան իրաւամբ եղաւ ազգային զուլալ երգին Մաշտոցը: Ժողովուրդը արդարօրէն պանծացուց յիշատակը Կոմիտասի, որուն սիրտը չտոկաց ի տես Հայոց ցեղասպանութեան Գողգոթային, դադրեցաւ բարբախելէ, բայց վերակենդանացաւ էւ յարութիւն առաւ: Այդ յարութեան վկայութիւնն է այսօր այս հոյակերտ կեդրոնը: Այդ յարութեան վկայութիւնն են Կոմիտասեան ժողովրդական եւ հոգեւոր երգնու երաժշտութիւնը, որոնք կը ցուցնեն Հայ ժողովուրդին ապրումները, աննկուն կամքը եւ տենչերը: Յարգանքով կը խոնարհինք Անոր յաւերժական յիշատակին առջեւ»:

Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ նախատեսված միջոցառումների կազմակերպչական կողմը, քաղաքական համատեքստը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական պահանջների թղթածրարի մշակման աշխատանքների մասին հարցեր քննարկելուց զատ հանձնաժողովի 5-րդ նիստը ընդունեց մի պատմական որոշում՝ հայ և միջազգային հանրությանը ներկայացնել համայն հայության անունից ընդունված մի հռչակագիր, որի վրա աշխատել են հայկական ամենատարբեր կառույցների՝ թե հոգևոր և թե աշխարհական ներկայացուցիչներ, փորձագետներ: Հռչակագրի տակ ստորագրեցին հանձնաժողովի բոլոր անդամները: «Առաջին անգամ մենք ընդունում ենք համազգային նշանակության մի փաստաթուղթ ոչ թե պետական որևէ կառույցի միջոցով, ոչ թե մեր ազգի ներկայացուցիչների առանձնացված հատվածներով, այլ ողջ հայ ժողովուրդը ներկայացնող բոլոր հիմնական կառույցների ներգրավմամբ».

ասել է ՀՀ նախագահը: Հռչակագիրը թարգմանվելու է 7 լեզուներով և ուղարկվելու է նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: Այն հանդիսավորությամբ ընթերցեց ՀՀ նախագահը նիստի ավարտից հետո՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, եղեռնի գոհերին միասնական հարգանքի տուրք մատուցելուց հետո: